Դուք կարող եք ստանալ Supplemental Security Income (SSI)

Բովանդակություն

Ի՞նչ է SSI-ը:	1
Որքա՞ն կարող եք ստանալ:	1
Ինչպե՞ս որակավորվել SSI-ի համար:	2
Ինչպե՞ս դիմել SSI-ի համար:	2
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	3

Ի՞նչ է SSI-ը:

Supplemental Security Income-ը (SSI) (Լրացուցիչ ապահովության եկամուտ) դաշնային ծրագիր է, որն ամսական վճարումներ է տրամադրում այն անձանց, ովքեր սահմանափակ եկամուտ և քիչ հնարավորություններ ունեն: SSI-ը 65 կամ ավելի բարձր տարիքի անձանց համար է, ինչպես նաև որևէ տարիքի անձանց, ներառյալ երեխաների, ովքեր կույր են կամ հաշմանդամություն ունեն:

SSI ստանալու համար Դուք պետք է՝

- Լինեք 65 կամ ավելի բարձր տարիքի,
- Լինեք ամբողջովին կամ մասամբ կույր, կամ
- Ունենաք առողջական վիճակ, որը թույլ չի տալիս Ձեզ աշխատել, և ակնկալվում է, որ այն կտևի առնվազն մեկ տարի կամ կհանգեցնի մահվան:

Երեխաների համար այլ կանոններ կան: Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք *Benefits for Children With Disabilities* (Publication No. 05-10026-AM):

Որքա՞ն կարող եք ստանալ:

SSI-ի բազային ամսական վճարումը 2018թ.-ի համար միևնույնն է ամբողջ երկրում: Այն կազմում է՝

— $750 մեկ անձի համար կամ

— $1,125 զույգի համար:

Ոչ բոլորն են ստանում միևնույն գումարը: Դուք կարող եք ավելին ստանալ, եթե ապրում եք մի նահանգում, որը դաշնային SSI վճարման վրա դրամ է ավելացնում: Դուք կարող եք պակաս ստանալ, եթե Դուք կամ Ձեր ընտանիքն այլ եկամուտ ունեք: Ձեր SSI վճարման վրա ազդում է նաև այն, թե որտեղ և ում հետ եք ապրում:

Ինչպե՞ս որակավորվել SSI-ի համար:

Ձեր եկամուտը

Ձեր եկամուտը ներառում է Ձեր վաստակած դրամը, Ձեր Social Security նպաստները, Ձեր կենսաթոշակները և մեկ ուրիշից ստացած պարագաների արժեքն, ինչպիսիք են՝ սնունդն և կացարանը:

Ձեր ապրած վայրն ազդում է եկամտի գումարի վրա, որ կարող եք ստանալ յուրաքանչյուր ամիս և դեռևս SSI ստանալ: Տարբեր նահանգներ տարբեր օրենքներ ունեն:

Բաներ, որոնք Ձեզ են պատկանում

Դուք կարող եք SSI ստանալ, եթե Ձեր հնարավորությունների (բաների, որոնք Ձեզ են պատկանում) արժեքը չի գերազանցում $2,000 մեկ անձի համար և $3,000՝ միասին ապրող ամուսնացած զույգի համար: Մենք չենք հաշվարկում Ձեր ողջ ունեցվածքը, երբ որոշում ենք, թե արդյոք կարող եք SSI ստանալ: Օրինակ՝ մենք չենք հաշվարկում Ձեզ պատկանող տունը, եթե Դուք այնտեղ ապրում եք, և մենք սովորաբար չենք հաշվարկում Ձեր ավտոմեքենան: Մենք հաշվարկում ենք կանխիկ դրամը, բանկային հաշիվները, բաժնետոմսերն ու պարտատոմսերը:

Դուք պետք է ԱՄՆ-ի մշտաբնակ լինեք

SSI ստանալու համար Դուք պետք է ապրեք United States-ում կամ Northern Mariana Islands-ում: Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք, սակայն օրինական կերպով բնակվում եք United States-ում, Դուք դեռևս կարող եք իրավունակ լինել ստանալու SSI: Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք *Supplemental Security Income (SSI) Noncitizens-ի համար* (Publication No. 05-11051-AM):

Այլ նպաստներ

SSI ստանալու համար Դուք նույնպես պետք է դիմեք որևէ այլ նպաստների համար, որոնց իրավունքը կարող եք ունենալ: Եթե Դուք SSI եք ստանում, սովորաբար Դուք կարող եք նպաստներ ստանալ Supplemental Nutrition Assistance Program-ից (SNAP) (Լրացուցիչ սննդի աջակցման ծրագիր) և Medicaid-ից: Medicaid-ն օգնում է վճարել բժիշկների և հիվանդանոցի հաշիվները, իսկ SNAP-ն օգնում է վճարել սննդի համար:

SNAP նպաստների համար դիմումները մատչելի են Social Security գրասենյակում: Ձեզ համար հասանելի սննդի աջակցման ծրագրերի մասին տեղեկությունների համար ընթերցեք *Nutrition Assistance Programs* (Publication No. 05-10100) և Supplemental *Nutrition Assistance Program (SNAP) Facts* (Publication No. 05-10101-AM): Դիմելու մասին տեղեկությունների համար այցելեք ***www.fns.usda.gov/snap*** կայքը:

Ինչպե՞ս դիմել SSI-ի համար:

Որպեսզի դիմեք SSI-ի համար, Դուք կարող եք սկսել գործընթացը և լրացնել Ձեր դիմումի մեծ մասն՝ այցելելով մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov/applyforbenefits*** հասցեով: Դուք կարող եք նաև զանգահարել մեզ **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով՝ Ձեր տեղական Social Security գրասենյակի ներկայացուցչի հետ դեմ-առ-դեմ կամ հեռախոսային ժամադրություն նշանակելու համար:

Դուք կարող եք իրավունակ լինել լրացնելու Ձեր SSI դիմումն առցանց, եթե Դուք՝

- 18-ից 65 տարեկան եք,
- Երբեք ամուսնացած չեք եղել,
- Կույր չեք,
- ԱՄՆ քաղաքացի եք, ով ապրում է 50 նահանգներից մեկում, District of Columbia-ում կամ Northern Mariana Islands-ում,
- Նախկինում չեք դիմել կամ չեք ստացել SSI նպաստներ, և
- SSI-ի դիմումի հետ մեկտեղ դիմում եք նաև Social Security Disability Insurance-ի (Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրություն) համար:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-11069-AM | January 2018
Դուք կարող եք ստանալ Supplemental Security Income (SSI)
You May Be Able to Get Supplemental Security Income (SSI) (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: